

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

“ՌԱԿԵ”

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Ձեռնարկություն  
Օբյեկտ


մասերը

“Գլոբալ Գոլդ Մայնինգ” ՍՊԸ  
ՀՀ Սյունիքի մարզի Մարջանի ոսկի  
բազմամետաղային հանքավայր  
փորձնական բացահանք  
երկրաբանական, լեռնային,  
լեռնամեխանիկական, տնտեսական  
հաշվարկներ, աշխատանքի պաշտպանություն

ԳԻՐՔ 1

/ Բացատրագիր /

“ՌԱԿԵ” ՍՊԸ –



Ռ. Առաքելյան

2008 թվական – 2008

## ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Գիրք 1 - Երկրաբանական ,լեռնային,լեռնամեխանիկական,աշխատանքի պաշտպանություն,տնտեսագիտական ,բացատրագիր/

Գիրք 2 . Աշխատանքային փաստաթղթեր /գծագրական մաս/

Գիրք 3 – Շրջակա միջավայրի պահպանումը

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի Մարջանի ոսկի - բազմամետաղային հանքավայրում արդյունահանման կազմակերպման նախագիծը կազմվել է "Գլոբալ Գոլդ Մայնինգ" ՍՊԸ – ի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի համաձայն / տես հավելված

Նախագծով նախատեսվում է 3.4 տարվա ընթացքում իրականացնել 60190մ<sup>3</sup> ծավալով հաշվակշռային հանքաքարի արդյունահանում : Արդյունահանման նպատակն է փորձնական ռեժիմով որոշել հանքաքարի արդյունահանման և վերամշակման /հարստացման/ տեխնոլոգիական ցուցանիշները:


Արդյունահանվախ հանքաքարը ավտոտրանսպորտով տեղափոխվում է փորձնական հարստացուցիչ ֆաբրիկա և մշակվում գրավիտացիայի :

Արդյունահանումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով , նախնական մեխանիկական փխրեցումով էքսկավատորային բարձունով ավտոինքնաթափի մեջ:

Արդյունահանման մեջ ընդգրկվում են հանքային ## 1,2,6,6ա և 7մարմինների վերին շերտերը խրամածև փորվածքների մինչև 20 մ խորությամբ: Արդյունահանվող հանքաքարի ծավալը կազմում է ընդհանուր պաշարների 4%: Հանքային մարմինների արդյունահանման տարածքները սահմանափակվում են հյուսիսից արգելացված գծով մինչև անտառի սահմանը: Թիվ 6 և 6ա հանքային մարմինների վերին շերտերը մշակվում են ուսումնասիրված տարածման երկարությամբ:



# Космофотокарта Армении



## Բովանդակություն

Ներածություն .....	3
1. Գլխավոր հատակագիծ, տրանսպորտ և բացահանքի կառուցման նախահաշիվ .....	6
2. Երկրաբանական մաս .....	10
2.1 Տեղեկություններ շրջանի ռելիեֆի գրագրության և կլիմայի մասին .....	10
2.2 Մարջանի հանքավայրի երկրաբանական կառուցվածքը .....	11
2.3 Հանքային մարմինների ձևաբանությունը, տեղադրման պայմանները և ներքին կառուցվածքը .....	12
2.4 Հանքավայրի լեռնատեխնիկական ջրաերկրաբանական բնութագիրը .....	24
2.5 Տեղեկություններ հանքավայրի պաշարների վերաբերյալ .....	27
2.6. Տեխնոլոգիական հետազոտությունների ցուցանիշները .....	28
3. Լեռնային և լեռնամեխանիկական մասեր .....	33
3.1. Լեռնային աշխատանքների կազմակերպումը .....	33
3.2. Լեռնային բաց աշխատանքներ .....	33
3.3. Նախագծային կորուստները և աղքատացումը .....	34
3.4. Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքային ռեժիմը .....	35
3.5. Լեռնակապիտալ աշխատանքներ .....	36
3.6. Բացահանքի հանքաստիճանների բացումը .....	37
3.7. Կառուցվածքային պայտերի հետազոտում .....	38
3.8. Մշակման համակարգը .....	38
3.9. Լեռնային զանգվածի նախապատրաստումը արդյունահանման .....	41
3.10 Հանույթաբարձման աշխատանքներ .....	41
3.11. Լեռնային զանգվածի տեղափոխումը .....	43
3.12. Լցակույտի կազմավորումը .....	44
3.13. Բացահանքի մշակման ժամանակացույցային պլան .....	45
3.14. Բացահանքի ջրամատակարարումը և ջրհեռացումը .....	53
3.15. Աշխատանքի պաշտպանությունը .....	54

3.15.1. Արդյունաբերական սանիտարիայի և անվտանգության տեխնիկան.....	54
3.15.2. Ձեռքի աշխատանքների մեքենայացում.....	56
3.15.3 Ինժեներատեխնիկական միջոցառում.....	57
4. Տնտեսագիտական հաշվարկներ.....	58
4.1. Շինարարության և արտադրության տնտեսագիտական հիմնավորումը...58	
4.2. Շահագործական ծախսեր.....	61
Հավելված 1 Տեխնիկական առաջադրանք.....	69
հավելված 2 Լիցենզիայի պատճենը.....	71
հավելված 3 Հիմնական նյութերի տարեկան ծավալը.....	73
Հավելված 4 Բացահանքի հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ցուցակ.....	74
Հավելված 5 Բացահանքի աշխատողների հաստիքային ցուցակ.....	75

# 1. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԲԱՑԱՀԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Համաձայն մշակված լեռնային մասի աշխատանքային նախագծի նախագծվել են հավաքող հանքատար և լցակույտատար ավտոճանապարհները:

հանքատար և լցակույտատար ավտոճանապարհները նախագծված են հետևյալ տեխնիկական ցուցանիշներով .

- շարժման շերտերի թիվը – 2
- անցումային մասի լայնությունը – 7.0մ
- հողային պաստառի լայնքը – 10.0մ
- ընդերկայնական միջին թեքությունը – 8 - 12%
- շրջադարձի նվազագույն շառավիղը – 20 մ

Հավաքող ավտոճանապարհի երկարությունը կազմում է 4200 մ:

Հավաքող ավտոճանապարհից մինչև 2620,2550,2520,2450,2380 և 2250մ միջի հանքաստիճանները նախագծված են մուտքային ավտոճանապարհների:Մուտքային ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2500 մ:

Ավտոճանապարհների ուղեգծերը տարված են հիմնականում կիսահանույթներով և լիրքերով:

Հավաքող և մուտքային ավտոճանապարհների ծածկումը նախատեսված է բացահանքերի խճային թափոններով:Փռված ապարները հարթեցվում են 15-20 սմ հաստությամբ շերտով:

Մարջանի հանքի հիմնական արդյունաբերական հրապարակը նախատեսվում է տեղադրել Կամրջակ գետի ձախ ափին,հրապարակի մակերեսը կազմում է 37000մ<sup>2</sup>, և գտնվում է 2200 – 2250 մ ծովի մակարդակից բարձրության վրա:

Արդյունաբերական հրապարակում տեղադրվելու են՝

- հանքվարչության ադմինիստրատիվ շենքը
- բանվորական ճաշարանը
- աշխատակիցների կենցաղ – սպասարկման համալիրը
- աշխատակիցների ժամանակավոր բնակման հանրակացարանը
- մնուշապատրաստման տեղամասը և քիմիական լաբորատորիան
- գլխավոր էլեկտրատեխնիկայանը
- տեխնիկական ջրի ջրամբարը
- հանքի և արդյունաբերական կեղտաջրերի մաքրման կայանը
- խմելու ջրի ջրամբարը
- մեխանիկական արհեստանոցը և ավտոպահեստը
- փայտամշակաման արհեստանոցը
- պահեստային շենքը
- հանքաքարի բեռնաթափման հրապարակը /Մարջանի ՈԿՖ մոտակայքում/

Նախատեսվում է հանքաքարի տեղափոխումը Մարջանի ՈԿՖ իրականացնել հավաքող ավտոճանապարհով ինքնաթափ ավտոմեքենաներով, որոնց քանակը հաշվարկված է լեռնամեխանիկական մասում:

Աշխատանքային հերթափոխերը հանքի արտադրական հրապարակից վայր հասցնելու և ետ բերելու համար նախագծով նախատեսվում է ԴԱՅ – 66 վախտային ավտոմեքենա:

Նյութերի և պահեստասաների տեղափոխման համար նախատեսվում է մեկ հատ բեռնատար 3-8 տ բեռնատարողությամբ ավտոմեքենա:

Օժանդակ աշխատանքների համար նախագծով նախատեսվում է մեկական ԿՇ 3577 մակնիշի ավտոկռունկ, բուլդոզեր, էքսկավատոր, ապարաբարձիչ և մարդատար ավտոմեքենա:

Բացի նշված ծավալներից, որպես օգնություն նախատեսվում է վերանորոգել մերձսահմանային զինված ուժերի կողմից օգտագործվող



հատուկ ճանապարհները վերապրոֆիլացում – 10000 մ,  
 ճանապարհների վերակառուցում և վերանորոգում – 47000 մ:

Այս աշխատանքների ծավալը կկազմի մոտ 60000մ<sup>3</sup>:

Գլխավոր հատակագծի և տրանսպորտի մասով աշխատանքների  
 ծավալները բերված են աղյուսակում 1 :

Աղյուսակ 1

h/h	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	2	3	4
	հավաքող և մուտքային ճանապարհներ 6700մ		
	- Հանույթ (VIII խմբի բնահողի մեջ, $\varphi = 2.8\text{տ}/\text{մ}^3$ )	մ <sup>3</sup>	15120
	- Լիրք	մ <sup>3</sup>	68880
	- VIII խմբի բնահողի մշակում բուլղոգերով, հանույթի տեղափոխում լիրք (40մ)	մ <sup>3</sup>	15120
	Բացահանքի մակաբացման ապարներից VIII խմբի կատակված բնահողի բարձուն էքսկավատորով (շերտի տարողությունը 1.0 մ <sup>3</sup> ) ավտոինքնաթափի մեջ (ընդհանուր տարողությունը 12տ) և տեղափոխում մինչև 0.5կմ հեռավորության վրա լիրք	մ <sup>3</sup>	21170
	Պաստառի և թեքությունների հարթեցում VIII խմբի բնահողերում	մ <sup>2</sup>	29400
	Լիրքի պաստառի և թեքությունների հարթեցում	մ <sup>2</sup>	20500
	հողախճային շերտի կառուցում 15 սմ շերտով	մ <sup>3</sup>	4410

Մարջանի հանքավայրի փորձարարական բացահանքի շիննոնտաժային աշխատանքների խոշորացված նախահաշիվը բերված է աղյուսակ 2-ում

Աղյուսակ 2

hh	հոդվածներ	Ընդհանուր արժեքը հազ.դրլար	Այդ թվում	
			շինարարահավաքման	սարքավորումներ
1	Տարածքի նախապատրաստում	3.9	-	-
2	Արտադրության հիմնական օբյեկտներ	177.9	117.0	60.9
3	Արտադրության օժանդակ և մատակարարող օբյեկտներ	52.0	31.2	20.8
4	Տրանսպորտային օբյեկտներ	38.1	2.9	35.8
5	Արդյունաբերական հարթակի բարեկարգում	7.0	6.6	0.4
6	Ժամանակավոր կառույցներ և կացարաններ	9.6	5.8	3.8
7	Մեքենաներ	25.2	11.0	14.0
8	Նախագծային և հետազոտական աշխատանքներ	11.8	11.8	-
9	Զնախատեսված աշխատանքների պահուստ	39.9	23.9	16.0
	Ընդամենը	369.0	214	151.7
	ՀՀ դրամով	113652.0	66928.4	46723.6

## 2. Երկրաբանական մաս

### 2.1. Տեղեկություններ շրջանի ռելիեֆի, ջրագրության և կլիմայի մասին

Հանքավայրի բացարձակ բարձրության միջերը տատանվում են 2100 – 2700 մետր: Տարածքը կապված է Սիսիան քաղաքի հետ 26 կմ երկարությամբ ավտոճանապարհով և գտնվում է մոտակա Արեվիս գյուղից 8 կմ դեպի հարավարևմուտք: Հանքավայրը զբաղեցնում է 2 կմ<sup>2</sup> տարածք և մտնում է Ջանգեզուրի հանքային դաշտի մեջ: Գտնվելով Ջանգեզուրի լեռնային համակարգում, հանքավայրի տարածքը, ինչպես նաև նրան հարող շրջանները բնութագրվում են խիստ կտրված, լեռնային ռելիեֆով, հաճախ ժայռային ձևերով: Ռելիեֆի հիմնական ձևավորողը հանդիսանում է գետային ողողամաշումը: Տարածքը կտրված է խոր ձորերով Սիսիան/Որոտան գետի աջ վտակը/, Գիժ - գետ, Կամրջակ, Սալվարդ գետերի կիրճերի զառիթափ լանջերով: Շրջանում դիտվում է վերտիկալ զոնալականություն: Հանքավայրում ձմռանը ցուրտ է, ամբողջ Սիսիանի շրջանում /նախկին տարածքային միավորում/ կլիման չափավոր – ցուրտ, տեղ – տեղ չափավոր: Տեղումները տարեկան միջին քանակությունը Սիսիան գետի ավազանում 500 – 600 մմ է 400 մմ գոլորշիացմամբ: Ջերմաստիճանի օրեկան տատանումը կազմում է 10 – 12<sup>0</sup> C, ամենից ցուրտ ջերմաստիճանը դիտվում է հունվար ամսին - 10 - - 12<sup>0</sup> C, ամենաբարձրը՝ հուլիս – օգոստոս ամիսներին + 16 - +18<sup>0</sup> C:

Շրջանի բուսականությունն ու կենդանական աշխարհը յուրահատուկ են ալպիական և լեռնային լանդշաֆտային գոտիներին: Արեվիս գյուղի և հանքավայրի միջև կան գաճաճ ծառերի թփուտներ: Շրջանը գտնվում է Հայաստանի Հանրապետության 8 - բալանոց սեյսմիկ գոտու մեջ: Սիսիանի շրջանը սնուցվում է Որոտան – կասկադ էլեկտրացանցի համակարգից: Խմելու ջուրը ապահովում են աղբյուրները, իսկ տեխնիկականը՝ Սիսիան գետային ցանցը:

Սկսած 2003 թ-ից, հանքավայրում ,ինչպես նաև նրա հյուսիսային տեղամասում, երկրաբանահետախուզական աշխատանքներ են տարվում ամերիկյան հետախուզա - շահագործական “Գլոբալ Գոլդ” կորպորացիայի կողմից:

## *2.2. Մարջանի հանքավայրի երկրաբանական կառուցվածքը*

Մարջանի հանքավայրը պատկանում է ՀՀ տարածքում հանդիպող ոսկի բազմամետաղային հանքավայրերի թվին ,որոնք հարում են դիորիտ – պորֆիրիտային կազմի դայկաներին:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին եոցենի հասակի հրաբխածին առաջացումները, որոնք զարգացած են Մարջանի հանքային դաշտի կենտրոնական մասում և կրում են համատարած հիդրոթերմալ փոփոխվածություն:

Հրաբխածին հաստվածքում հստակ առանձնացվում են դիորիտ – պորֆիրիտային կազմի կտրող դայկաներ և իրենց կազմով էֆուզիվ ապարներից հազվադեպ տարբերվող բազալտներով ներկայացված սուբհրաբխային առաջացումներ:

Հանքավայրում և շրջակայքում լայնորեն տարածված է դայկային համալիրը, որը հիմնականում ներկայացված է դիորիտ – պորֆիրիտային կազմի ապարներով, որոնց հզորությունը տատանվում է 3 մ – ից մինչև 45 մ և ձգվում են 300 – 400 մ-ից մինչև 1000 և ավելի մետր: Դայկաների ընդհանուր երկարությունը կազմում է 50 կմ: Կառուցվածքը փոփոխությունների: Դիորիտ – պորֆիրիտային բոլոր դայկաները ըստ հասակի առանց բացառության հանդիսանում են մինչհանքային և որոշ հատվածներում խաղացել են հանքահսկող դեր (հանքային մարմին 6):

Մարջանի հանքային դաշտը հանդիսանում է երկրաբանական մի հանգույց , որտեղ կենտրոնացված են հրաբխածին և երակային ապարներն ու փոքր ներծայթուկները և որտեղ կոտրատման շնորհիվ ստեղծվել են նպաստավոր պայմաններ ներփակող ապարների հիդրոթերմալ փոփոխությունների համար, ինչը պայմանավորված է խզումային

խախտումների ինտենսիվ զարգացման հետևանքով ապարների բարձր թափանցելույամբ: Հանքային դաշտում առանձնանում են հյուսիս - արևելյան և հյուսիս - արևմտյան ուղղություններով կայուն տարածմամբ խզումներ: Հյուսիս - արևմտյան ուղղության խզումները հաճախ ուղեկցվում են դայկայով, որոնց մերձհպումային մասերը ծառայել են հանքաբեր լուծույթների թափանցման ուղիներ: Հյուսիս - արևելյան խզումների համակարգը արտահայտված է առավել ցայտուն և ներկայացնում է գծային մինչև 10 – 15 կմ ձգվածությամբ կառուցվածքներ, ինչպիսին Մարջանի խզումն է, որը Մարջանի հանքավայրից հյուսիս - արևելյան ուղղությամբ հետապնդվում է մինչև Սիսիան գետի վերին հոսանքները Սալվարդ գյուղի մոտ: Խզման գոտու հզորությունը 1 – 2 մ – ից հասնում է մինչև 10 – 15 մ: Առավել հզորության է հասնում է Մարջանի լեռների կատարային մասում, որտեղ այդ գոտուն են հարում դիորիտ – պորֆիրիտների դայկաների և գմբեթածև ելքերի շարք, ինչպես նաև երկրաֆիզիկական անկանոնություններ: Խախտման գոտու ապարները հիդրոթերմալ խիստ փոփոխված են և պիրիտացված:

Բացի խզումային խախտումներից հանքային դաշտում առանձնացվում են հանքավայրը հյուսիսից և հարավից սահմանափակվող բարձր ճեղքավորվածության երկու գոտիներ, որոնցից հարավայինը անցնում է Կամրջակ գետի հունով, որտեղ հայտնի են մի քանի փոքր հանքային աղբյուրներ:

### *2.3 Հանքային մարմինների ձևաբանությունը և եղանակային տարբերությունը:*

#### *Ճեղքի խառնուրդներ:*

Հանքավայրի սահմաններում հայտնի են ավելի քան 10 հանքային մարմիններ, որոնցից ներկայումս արդյունաբերական հետաքրքրություն են ներկայացնում իննը՝ 1, 1ա, 2, 4, 4ա, 6, 6ա, 7, 8 և 11: Հանքային մարմինները տարբեր աստիճանի հետազոտված են ինչպես տարածմամբ, այնպես էլ անկմամբ: Մակերևույթում դրանք բացված են հետախուզաառուներով, մաքրվածքներով ու հետախուզահորերով, խորքում՝ տարբեր հորիզոններում

ստորերկրյա լեռնային փորվածքներով և մի շարք հորատանցքերով :  
Հանքային մարմինները հիմնականում ձգվում են հյուսիս - արևելյան ու  
մերձմիջօրեական ուղղությամբ (330 -100),գերակշռող հյուսիս-  
արևելյան,հազվադեպ հարավ - արևմտյան (հանքային մարմիններ 1, 8)  
անկմամբ:

Ըստ տեղադրման պայմանների հայտնի են ինչպես մակերևույթում  
ստորերկրյա փորվածքներում միայն մեկ հատույթով բնութագրված և  
գործնականում չհետազոտված մետաղների բարձր պարունակությամբ  
հանքային մարմիններ (ինչպես օրինակ բովանցք 3 շտրեկ 3a հատող 13-ում ,  
Հյուսիսային տեղամասի հորատանցքերում):

Հանքային մարմինների զգալի մասը տեղադրված է հրաբխածին  
հաստվածքների դաջիտներում ,անդեզիտադաջիտային պորֆիրներում և  
դրանք և դրանց հրաբեկորային ապարներում , (հանքային մարմիններ  
1,1a,2,3,5,6ա,7,8, և 10), որոշ մարմիններ (4,6,6բ) հանքավայրի հարավ -  
արևմտյան հատվածում հարում են դիորիտ – պորֆիրիտային դայկաների  
հպումային մասերն և ձգվում են դրանց ամբողջ երկարությամբ ավելի քան  
1000մ:6բ մարմինը արևելյան մասով և խորքում կցադրվում է դիորիտ –  
պորֆիրիտային դայկայի հպման հարթությամբ տեղադրված 6-րդ մարմնի հետ:

Հրաբխածին հաստվածքի ապարներում տեղադրված հանքային  
մարմինները հիմնականում բնութագրվում են մերձմիջօրեական տարածմամբ,  
ունենալով սահուն աղեղածև կորություններ ,դայկաների հարող մարմինները  
կրկնում են վերջիններիս եզրագծերը:

Հանքային մարմինների ուղղագիծ տարածման հատվածներում  
հանքայինացումը կենտրոնացված է լինում սուլֆիդային և ուլտրա –  
սոլֆիդային երակներում և բնութագրվում է երկրաբանական  
սահմաններով,իսկ հանքամարմինների կորագիծ մասերում հանքային գոտին  
ներկայացված է լինում ոչ ավել 15 մ հզորությամբ ցանավոր թույլ  
հանքայնացմամբ անհստակ սահմաններով,որտեղ հանքային մարմնի  
հզորությունը որոշվում է նմուշարկման արդյունքներով:



Հանքային մարմին 1-ը տեղադրված է հանքավայրի արևելյան մասում մերձմիջօրեական տարածամամբ հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտում: Մակերեսում այն հետապնդված է մոտ 1200 մ երկարությամբ, տարածումը հիմնականում մերձմիջօրեական է (350 - 356°), հյուսիսային հատվածում փոփոխվում է հյուսիս-արևմտյանի (335°), անկումը զառիթափ է 75-80°:

Հանքամարմնի հյուսիսային հատվածը հետազոտված է ինչպես մակերևութային, այնպես էլ ստորերկրյա լեռնային փորվածքներով: Միջին հզորությունը կազմում է 1.2 մ, ոսկու միջին պարունակությունը 3.0 գ/տ, արծաթինը 105.4 գ/տ, ցինկինը՝ 1.43%, կապարինը 0.69%:

Հանքային մարմնի հարավային հատվածը հետազոտված է միայն մակերևութու, որտեղ միջին հզորությունը կազմում է 1.0 մ, ոսկու միջին պարունակությունը 3.6 գ/տ, արծաթինը 105.4 գ/տ, ցինկինը՝ 0.08%, կապարինը 1.44%: Խորքում #10 բովանգքի հորիզոնից վեր, այն խաչաձևվում է արևելյան անկում ունեցող թիվ 1 հանքամարմնի հետ:

Հանքամարմինը ներկայացվում է հիդրոթերմալ խիստ փոփոխված ապարների սահուն ոլորում ուրվագծերով գոտի: Ներփակող անդեզիտների հետ հպումները առավելապես ցայտուն են և ներկայացված են կավերով լցված տեկտոնական ճեղքերով: Հանքային լցոնվածությունը ներկայացված է 2-3 սմ մինչև 20 – 25 սմ հռոտուծամբ քվարզ - բազմամետաղային երակներով և երակիկներով: Հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտում նկատվում են հանքային միներալների (սֆալերիտ, գալենիտ, պիրիտ) մազանման երակիկների, ցան և փոքր բնիկներ: Հաճախ հանդիպում է փշրաքարանման հանքամարմնի կենտրոնական, այնպես էլ մերձհպումային մասերում և հարում են տեկտոնական ճեղքերին: Երակներն ու երակիկները տարածամամբ հետապնդվում են 3-5 մ-ից մինչև 30 – 50 մ: Հանքային մարմնի հզորությունը ինչպես տարածամամբ, այնպես էլ անկմամբ տատանվում է փքվածքներում 3մ-ից մինչև 0.2 – 0.3 մ բարակացած մասերում: Հանքային մարմնի կենտրոնական մասում կախված կողից հարավային ուղղությամբ բաժանվում են իրար զուգահեռ երկու ճյուղեր (ապոֆիզներ) որոնք նոր մակերևութային լեռնային փորվածքներում հետապնդվել են մոտ 480 մ ձգվածությամբ:





Handwritten text, possibly a name or a number, located in the middle left section of the page.



Հանքամարմնի ապոֆիզների հեռավորությունը միմյանցից չի գերազանցում 10 – 12 մ ,անկումը արևելյան է 75° անկյան տակ:

*Հանքային մարմին # 1<sup>ա</sup>* - հետախուզված է # 1/78 /2358մ հորիզոն/, #10 /2300մ հորիզոն/,# 3/2241 մ հորիզոն/ բովանգքերով:Սակերեսին հետապնդվում է մոտ 840 մ և ուսումնասիրված է 12 հետախուզաառուներով:

Հանքային մարմնի միջին հզորությունը կազմում է 1.2 մ,ոսկու միջին պարունակությունը կազմում է 3.2 գ/տ,արծաթինը ` 86.4 գ/տ,ցինկինը ` 0.96 % , կապարինը – 0.97 % .Հանքային մարմինը իրենից ներկայացնում է մերձմիջօրեկանի տարածմամբ /340° - 10°/ դեպի արևելք կտրուկ անկմամբ / 65 - 75°/ հիդրոթերմալ խիստ փոփոխված ապարների գոտի: Իր ձևաբանությամբ և նյութական կազմով հանքային մարմինը ըստ տարածման և անկման շատ փոփոխական է:Հարավային մասերում այն ներկայացված է մինչև 1 մ հզորությամբ քվարց-բազմամետաղային երակի տեսքով ` ներփակող ապարների հետ հստակ հպման սահմաններով,որոշ հատվածներում ` բնիկա-զանավոր հանքայնացումով, ոչ հստակ հպման մակերեսով:Որոշ հատվածներում գոտու մեջ նկատվում են ներփակող փոփոխված հրաբխածին ապարների ոսպնյակաձև մարմիններ:Հյուսիսային ուղղությամբ նկատվում է քվարց-բազմամետաղային երակի անցում դեպի երակիկացանավոր հանքամասաման հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտի`նման թիվ 1 հանքային մարմին,որտեղ 2 – 3 սմ հզորությամբ քվարց - բազմամետաղային երակիկները տեղադրված են ինչպես գոտու հպումներում ,այնպես էլ դրա ներսում:Թիվ 3 բովանգքի հորիզոնում հանքային մարմնի երկու կողերում հանքային մարմնի մասերը կազմված են ճյուղավորված (ապոֆիզներ) որոնք ըստ ձևաբանությամբ ներկայացվում են նմանակ հանքային մարմիններ,սակայն ներկայումս թույլ են հետազոտված:Հյուսիսային մասում հանքային մարմինը մոտ 480 մ ընդհանուր ձգվածությամբ արտահայտված է իրարից մինչև 20 – 25 մ հեռավորությամբ համարյա զուգահեռ տեղադրված երկու ճյուղով: Ճյուղը հիմնական մարմնից անջատվում և միանում է սուր անկյան տակ:

*Հանքային մարմին # 2* – գտնվում է հանքավայրի կենտրոնական մասում 1ա հանքային մարմնից արևմուտք:Հետազոտված է մակերևույթում 14 հետախուզաառուներով 700մ տարածմամբ, խորքում թիվ 7; 1/78;8;10

բովանգքներով և հորատանցքերով: Հանքային մարմնի միջին հզորությունը 1 մ է, ոսկու միջին պարունակությունը 2.0 գ/տ, արծաթինը՝ 81.8 գ/տ, ցինկինը՝ 1.2 %, կապարինը՝ 1.54 %:

Հանքային մարմինը ունի մերձմիջօրեական տարածում դեպի հյուսիս-արևմտյան/50-65°/ անկմամբ, զառիթափի / 65° – 80°/ , որոշ տեղերում անկումը մեղմ է մինչև / 55°/ անկմամբ: Հանքային մարմինը իրենից ներկայացնում է հիդրոթերմալ փոփոխված գոտի քվարց – պիրիտ – բազմամետաղ /սֆալերիտ, գալենիտ/ հանքայնացմամբ: Հանքային մարմնի հպումները պարփակող ապարների հետ հիմնականում հստակ են: Հանքային երակիկներն ու երակները հանդիպում են ամբողջ գոտում և վերագրվում են տեկտոնական ճեղքերին: Հզորությունները տատանվում են 3-5 սմ –ից մինչև 30-40 սմ մինչև 830 մ երկարությամբ: Հանքային մարմինը ըստ տարածման հետապնդված է մոտ 700 մ, խորությամբ՝ մինչև 450 մ:

Հանքային մարմին 3 - գտնվում է հանքավայրի կենտրոնական մասում, ունի հյուսիս - արևելյան անկում 50-60° անկում մոտ 75° անկյան տակ: Հետապնդված է մակերևույթում մոտ 550մ: Ներկայացված է քվարցային երակով սուլֆիդային հանքայնացմամբ : 2358 մ հորիզոնում մարմինը հատված է թիվ 8 բովանգք 2-րդ քվերշլագով և մեկ հորատանցքով:

Հանքային մարմին 4 - հետազոտված է մակերևույթում հետախուզաառուներով մոտ 800 մ տարածմամբ, խորքում թիվ 11,8, և 4 բովանգքների հորիզոններով: Թիվ 8 բովանգքի (2358մ) թիվ 4 շտրեկով հանքային մարմինը հատված է թիվ 950 մ քվերշլագով և թիվ 4 շտրեկով (2241մ) թիվ 4 շտրեկով՝ 580 մ: Հանքային գոտու հպումները ներփակող ապարների հետ առավելապես հստակ են՝ արտահայտված հպման կավերով լցված տեկտոնական ճեղքերով: Որոշ փոքր հատվածներում թույլ հանքայնացում նկատվում է նաև ներփակող հիդրոթերմալ փոփոխված ապարներում:

Թիվ 11 բովանգքի հորիզոնում մարմինը հիմնականում ներկայացված է մինչև 34- 40 սմ հազվադեպ 0.8 – 1 մ հզորությամբ և մոտ 65 երկարությամբ քվարց - բազմամետաղային երակով: Հանքային մարմնի միջին

հզորությունը 0.8 մ է , ոսկու միջին պարունակությունը 1.7 գ/տ , արծաթինը ` 84.8 գ/տ, ցինկինը ` 0.88%, կապարինը ` 0.99%:

Հանքային մարմինը ներկայացված է հիմնականում հիդրոթերմալ ուժեղ փոփոխված ապարների գոտիով, ունի ոլորուն ուրվագիծ ընդհանուր հյուսիս - արևմտյան – մերձմիջօրեական ( $320^\circ - 350^\circ$ ) ուղղությամբ : Անկուղ հիմնականում զառիթափ է  $70 - 75^\circ$  դեպի հյուսիս - արևելք, իսկ որոշ տեղերում ձեռք է բերում հարավ - արևմտյան ( $220 - 230^\circ$ ) անկում (շտրեկ 4ա բովանցք 4, միջակայք 295 -360մ):

Մարմնի հպումները ներփակող պորֆիրիտների հետ առավելապես հստակ են և ներկայացված են շփման կավերով լցված տեկտոնական ճեղքերով:


Թիվ 8 բովանցքի շտրեկ 4-ի 9.0 – 52.0մ և 67.0 – 79.0 մ միջակայքերում, ինչպես նաև մակերևույթում հանքային մարմինը տեղադրված է դիորիտ – պորֆիրիտային դայկալի պառկած կողում: Հյուսիսային մասում և հարավում, ինչպես նաև կենտրոնական մասում բովանցք 4 – ի շտրեկ 4ա - ում 2400 հորիզոնից ցած նկատվում է հանքային մարմնի հեռացում դայկալից:

Հանքային լցումվածությունը ներկայացված է քվարց - բազմամետաղային երակներով ու մանր երակներով, որոնց հզորությունը տատանվում է 5 – 7 սմ –ից մինչև 30-40 սմ, իսկ որոշ տեղերում հասնում են մինչև 0.8 – 1.0 մ: Համեմատին եռաններն ու մանր եռաններն ուստ տարածման կայուն են և հետապնդվում են մի քանի մ-ից մինչև 20 – 30 մ: Այս հանքային մարմնի համար նույնպես բնորոշ են երկկողմ ճյուղավորումների (ապոֆիզների) առկայությունը:

Գրանիտային հանքանյութի 4ա բովանցքի հեռացումը համարման ճյուղը, որը բնութագրվում է նույն ձևաբանությամբ , բազմամետաղների բարձր և ազնիվ մետաղների ցածր պարունակությամբ: Ճյուղը ունի հյուսիս - արևելյան անկում  $65- 75^\circ$  անկյան տակ:

Հանքային մարմին 6-ը - գտնվում է հանքավայրի արևմտյան թևում, հետապնդված է մակերևույթում հետախուզաառումներով և հետախուզահորերով մոտ 1000 մ ձգվածությամբ, խորքում բովանցք թիվ 4 և հորատանցքերով:







Հանքային մարմնի միջին հզորությունը կազմում է 1.4 մ, ոսկու միջին պարունակությունը՝ 2.3 գ/տ, արծաթինը՝ 135.5 գ/տ, ցինկինը՝ 0.40 %, և կապարինը՝ 0.46 %:

Հանքային մարմինը ներկայացված է հիդրոթերմալ ուժեղ փոփոխված, քվարցացված դիորիտ – պորֆիրիտների գոտիով: Բնութագրվում է ոլորում ուրվագծով՝ պահպանելով հիմնականում հյուսիս - արևմտյան մերձմիջօրեական (300-325<sup>0</sup>) տարածում և հյուսիս - արևելյան զառիթափի 60 – 70<sup>0</sup> անկում: Հանքային մարմինը տեղադրված է դիորիտ – պորֆիրիտային կազմի դայկայում, որի կախված կողը նույնպես ուղեկցվում է ոչ հզոր հանքային գոտիով, մոտ 700 մ ձգվածությամբ: Գոտու հպումները դիորիտ – պորֆիրիտների հետ հիմնականում հստակ են, կոդային ապարների հետ աստիճանական անցումները հազվադեպ են:

Հանքայնացումը ներկայացված է քվարց -բազմամետաղային կազմի փոքր հզորության երակներով և մանր երակիկներով, որոնց հզորությունը տատանվում է 3 – 10 սմ – ից մինչև 50 – 60 սմ: Հանքային երակներն ու մանր երակները զուգահեռ են գոտուն և տեղադրվում են հիմնականում դրա հպումային, հազվադեպ նաև կենտրոնական մասերում: Երբեմն գոտուն հանդիպում են փշրաքարային կոտրված քվարցի երակներ: Հիդրոթերմալ փոփոխված ապարների օտու սահմաններում նկատվում է հանքային միներալների (գալենիտ, սֆալերիտ, պիրիտ, խունացած հանքաքարեր և այլն), քմեր ու բարակ (մինչև 3 – 5 սմ հզորությամբ) մանր երակներ:

Հանքային մարմին 6ա - հետապնդված է մակերևույթում հետախուզատուներով 500 մ տարածմամբ, իրոքում - # 4, 5 և 6 բովանգքներով: Հանդիսանում է հանքային մարմին 6 – ի դայկայի հպումից հեռացած հյուսիս - արևմտյան շարունակությունը՝ առանձին մանր ապոֆիզներով, որոնցով երբեմն միանում է 6 – բո մարմնին:

Հանքային մարմնի միջին հզորությունը կազմում է 1.2 մ, ոսկու միջին պարունակությունը – 2.0 գ/տ, արծաթինը՝ 96.3 գ/տ, ցինկինը՝ 1.54%, կապարի՝ 1.03%:

Այս հանքային մարմինը հանդիսանում է # 6 մարմնի ճյուղը և ներկայացված է հիդրոթերմալ խիստ փոփոխված քվարցեցված դիորիտ-

պորֆիրիտներով: Գոտին ունի հյուսիս - արևմտյան տարածում՝ 290 – 300°  
անկումը՝ հյուսիս-արևելյան՝ 70-75° :

Հանքային մարմինը հարում է դիորիտ – պորֆիրիտային կազմի դայկային՝  
հպումները ներփակող ապարների հետ հիմնականում անհստակ են  
աստիճանական անցումներով:

Հանքայնացումը ներկայացված է 3 – 5 սմ – ից մինչև 15-20 սմ  
հզորությամբ քվարց - բազմամետաղային երակներով ու մանր  
երակներով, որոնք տարածմամբ ձգվում են մինչև 50 – 60 մ և հարում են  
գոտում զուգահեռ ներմիներալային տեկտոնական ճեղքերին: Վերջիններում  
երբեմն հանդիպում են ջարդոտված փշրաքարակերպ քվարցային  
երակներ: Հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտում նկատվում է  
հանքային միներալների (գալենիտ, սֆալերիտ, անտիմոնիտ, պիրիտ ) մանր  
ցանր, բներ և հազվադեպ բարակ մանր երակներ:

Հանքային մարմին թիվ 11 – հետապնդված է մակերևույթում  
հետախուզաառումներով մոտ 600 մ ձգվածությամբ, խորքում թիվ 4 բովանգքի  
հորիզոնով: Հանքային մարմնի միջին հզորությունը 1.7 մ է, դրանում ոսկու  
միջին պարունակությունը 1.6 գ/տ, արծաթինը՝ 82.1 գ/տ, ցինկինը՝  
0.70%, կապարինը՝ 0.45%:

Հանքային մարմինը ներկայացված է հիդրոթերմալ խիստ փոփոխված  
ուստոգասմած ուռիտ – սորֆիտներով, տարածվում է հյուսիս - արևմուտք  
340 – 350° դեպի հյուսիս - արևելք 70 – 75° զառիթախի անկմամբ:

Հանքային մարմինը հարում է դիորիտ պորֆիրիտային կազմի դայկային :  
Հանքային գոտու հպումները ներփակող ապարների հետ որոշ հատվածներում  
անհստակ են: Գոտում միջ անկյունական ճեղքերով հանդիպում են կտրասոված  
քվարցի երակներ:

Հանքայնացումը ներկայացված է 3-5 սմ մինչև 20 – 25 սմ հզորությամբ  
տարածմամբ զգալի ձգված ու տեկտոնական ճեղքերին հարող քվարց -  
բազմամետաղային մանր երակներով:

Հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտում հանդիպում է հանքային  
միներալների (գալենիտ, սֆալերիտ, պիրիտ և այլն) մանր ցան, բներ և մանր  
երակներ:

Հանքային մարմին # 7 - գտնվում է հանքավայրի կենտրոնական մասում ,տարածված է հյուսիս-արևմտյան ուղղությամբ մոտ 480մ ուղղությամբ,անկունը դեպի հյուսիս - արևելք 45 – 55<sup>0</sup> մոտ 70 – 80<sup>0</sup> անկյան տակ:

խորքում ուսումնասիրված է թիվ 7,8,1/78 և 3 բովանգքների հորիզոնում ինչպես նաև հատված է թիվ 40,42,43,37ա հորատանցքերով,մակերևույթում թույլ է հետազոտված ժամանակակից փուխր առաջացումների մեծ հզորության պատճառով:

Հանքային մարմնի միջին պարունակություններն են՝ ոսկի – 2.9 գ/տ, արծաթ – 69.4 գ/տ,կապար – 0.60%,ցինկ – 0.86%:

Հանքային մարմինը ներկայացված է հիդրոթերմալ խիստ փոփոխված ապարների գոտիով:Հաքային գոտու հպումները ներփակող թույլ արգիլիզացված անդեզիտների հետ առավելապես հստակ են և արտահայտված են հպման կավերով լցված տեկտոնական ճեղքերով:Հանքային մանր երակները գոտու տարածմամբ և անկմամբ փոխակերպվում են երակների և հակառակը,անցնելով բնածև ու ցանավոր հանքայնացման լրիվ սեպանում են:


Հանքային միներալներից հիմնականում հանդիպում են գալենիտը,սֆալերիտը և պիրիտը:

Հանքային մարմինը թիվ 8 - գտնվում է հանժամանակի հյուսիս - արևելյան թևում ,ունի հյուսիս - արևմտյան տարածում՝ անկունը դեպի հարավ - արևմուտք 235 – 250<sup>0</sup>,անկման անկյունը 70 – 85<sup>0</sup>:

Մակերևույթում հանքային մարմինը չի մերկանում հզոր (ավելի քան 10 մ) լճերվածքներով փակված լինելու պատճառով:Հայտնաբերված է խրամներում ու առուներում մոտ 340 մ տարածմամբ:Հետքը հայտնաբերված է երկրաֆիզիկական աշխատանքների արդյունքներով և հետապնդված է դեպի հարավ ևս մոտ 200մ:

Հանքային մարմինը խորքում հետազոտվել է թիվ 10 բովանգքի հորիզոնում,ինչպես նաև հատվել է թիվ 38 և 50 հորատանցքերով:Հանքային մարմնի միջին հզորությունը 1.2 մ է,դրանում միջին պարունակությունը ոսկի – 2.8 գ/տ,արծաթ – 60.9 գ/տ,կապար – 0.81%,ցինկ – 1.25%:







Հանքային մարմինը ներկայացված է հիդրոթերմալ փոփոխված , տրորված արգիլիզացված կավային նյութով քվարց – սուլֆիդային երակային զանգվածով:Սուլֆիդներից հանդիպում են պիրիտը,գալենիտը, սֆալերիտը:Ըստ տարածման հանքային մարմինը կրում է ձևաբանական և նյութական կազմի զգալի փոփոխություններ որոշ տեղերում,առավելապես հարավային մասում,այն ներկայացված է քվարց - բազմամետաղային երակով ներփակող ապարների հետ հստակ հպումներով :խորքում մոտավորապես 2250 հորիզոնում միանում է է թիվ 1ա հանքամարմնի հետ:

#### *2.4. Հանքավայրի լեռնա - տեխնիկական և ջրաերկրաբանակ բնութագիրը*

Հանքավայրի տարածքում տարվել են հիդրոերկրաբանական և ինժեներա-երկրաբանական կոմպլեքս աշխատանքներ ,բավարար չափով ուսումնասիրված է հանքային մարմինների տեղադրման լեռնա-տեխնիկական պայմանները: Վերջիններս չեն բնութագրվում հաստատուն տեղադրման տառոտրով և հաճախ ունեն ոլորածև եզրագծեր:Անկման անկյունները կտրուկ են և տատանվում են  $65^{\circ}$ - $85^{\circ}$  սահմաններում:Հանքային մարմինների մեծ մասը ունեն ելք դեպի մակերես:Մատ հզորության,կան հանքային երակների հատույթներ 250 մ – 300 մ խորության վրա,հզորությունները տատանվում են մի քանի սանտիմետրից մինչև 2.0 – 3.0 մ փքվածքներում,կազմելով միջինը 1.2 մ:Ձևաբանության տեսակետից հանքային մարմինները վերագրվում են համեմատաբար բարդ կարգին և ըստ առաջացման ,ծագման պայմանների՝ առկա են ինչպես լցված ,միաժամանակ առաջացած,այնպես էլ հետագայում տեղակայված երակներ:

Հիդրոթերմալ ապարները հրաբխածին են դացիտներ,անդեզիտ - դացիտներ:Կան նաև դիորիտ – պորֆիրային կազմի դայկաներ,որոնք ճեղքավորված են և ջարդրտված:

Ապարների բեկորայնությունը տատանվում է 150 – 250 մմ – ի սահմաններում: Ամրության գործակիցը ըստ Ա.Մ.Պրոտոդյակոնովի սանդղակի, միջինը 16-18 է: Ծավալային քաշը կազմում է 2.8 տ/մ<sup>3</sup>:

Հանքավայրը ,համաձայն հիդրոտեկրաբանական հետազոտությունների բաժանվում է հետևյալ ջրատար հորիզոնների՝

- Կամրջակ գետի ողողահունի ժամանակակից ալուվիալ – պրոլուվիալ նստվածքների ջրատար հորիզոն;
- Չորրորդականի հասակի էլուվիալ - դելուվիալ նստվածքների թույլ ջրատար հորիզոն;
- Հողմնահարման կեղևի, տեկտոնական խախտումների, ճեղքերի, երակա-ճեղքային գոտիների ջրահավաք հորիզոն

ա. – ժամանակակից ալուվիալ – պրոլուվիալ նստվածքների ջրատար հորիզոնը զարգացած է Կամրջակ գետի ողողահունում և ներկայացված է չտարանջատված գլաքարա - ճալաքարային հաստվածքով, լցոնված ավազային և ավազակավային նյութով՝ մինչև 40% : Հզորությունը կազմում է մոտ 65 մ : Ստորգետնյա ջրերի մակարդակը կախված է ինչպես գետի հոսքից ,այնպես էլ գլաքարա - ճալաքարային ապարների հզորությունից և կազմում է մոտ 36.3 – 40.3 մ :

Ջրատար հորիզոնը սնուցված է գետից և բեռնաթափվում է ալուվիալ - դելուվիալ նստվածքների տակ գտնվող մայրական ապարների ճեղքավորված գոտու ֆիլտրման ճանապարհով:

Ֆիլտրման գործակիցը տատանվում է 0.223-ից մինչև 1.1 մ/ օր:

Ըստ քիմիական կազմի ջրերը հիդրոկարբոնատ – կալցիումային են:

բ. – Չորրորդականի հասակի էլուվիալ - դելուվիալ նստվածքների թույլ ջրատար հորիզոնը ներկայացված է խճային, նուրբ կավային և կավային նստվածքներով և ունի լայն տարածում ամբողջ հանքավայրի տարածքում: Սնուցվում է մակերեսային տեղումներից և ֆիլտրվում է մայրական ապարների ճեղքավորված գոտու միջոցով աղբյուրների տեսքով: Ըստ քիմիական բաղադրության

հիդրոկարբոնատային են, նատրիում , կալցիում – սուլֆատային, մինչև 0.34 %միներալացմամբ և չեզոք ռեակցիայով՝ PH = 7.5

գ.- Հողմահարման կեղևի էկզոգեն / արտածին/ ճեղքավարվածության ջրահավաք գոտին ներկայացված է հրաբխա-նստվածքային հաստվածքով և նրա տուֆերով ու տուֆոփշրաքարերով:Հզորությունը , հորատանցքերի տվյալներով հասնում է 20 մ-ի ,որն էլ հանդիսանում է ջրահավաքման համար նպաստավոր գործոն:Երկրակեղևի հողմահարման ջրահավաք գոտին հանքավայրում ունի լոկալ տարածում:

Ճեղքային և ճեղքա - երակային ջրերը նկատվում են ստորգետնյա փորվածքներում / բովանցքներում / խոնավացման,թույլ կաթոցի , կաթոցի,հաճախակի կաթոցի,շիթերի և ջրային հոսքերի տեսքով:Ջրերի քանակությունը մակսիմումին հասնում է մայիս ամսին / բովանցք # 3 – 3.9 լ/վրկ,բովանցք # 4 – 5.0 լ/վրկ,բովանցք # 7 – 2.05 լ/վրկ,բովանցք # 8 – 2.5 լ/վրկ/ և մինիմում՝ սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին /բով # 3 – 3 լ/վրկ բովանցք # 4 – 4.15 լ /վրկ,բով # 7 – 0.53 լ/վրկ/:

Հանքավայրում ջրահավաքվումը կապված է ճեղքավորված գոտիների, տեկտոնական ջարդոտված գոտիների հետ:Չափումները ցույց են տվել ,որ ջրահոսքը լեռնային փորվածքներում մեծ չէ և կազմում է 17.27 լ/վրկ:

Հետազոտվող տարածքում գրունտն ու ապարները բաժանվում են երկու կոմպլեքսի՝

1. Մազե,Լեսային փխրա - բեկորային կոմպլեքս
  - ալուվիալ – պրոլուվիալ նստվածքներ
  - էլուվիալ - դելուվիալ նստվածքներ
2. Մայրական ապարների հենքի կոմպլեքս

Ալուվիալ – պրոլուվիալ նստվածքները զարգացած են Կամրջակ գետի ողողահունում,ինչպես նաև ծախսափնյա վտակներում:Խտությունը կազմում է 1,78 գ/սմ<sup>3</sup> , միներալացված հատվածներում՝ 2,85 գ/սմ<sup>3</sup> ծակոտկենությունը 44,75 % է, դեֆորմացման գործակիցը 45 կգ/սմ<sup>2</sup>:

Ալուվիալ - դելուվիալ նստվածքները զարգացած են ջրբաժաններում և լանջերին: Կտրվածքով վերևից – ներքև ներկայացված են խճային, խճավազային, կավավազային, ավազակավային և կավային գրունտներով և ունեն հետևյալ ֆիզիկա - մեխանիկական հատկանիշները՝ միջին խտությունը 1.44 գ/սմ<sup>3</sup> / 1.34 – 1.54 գ/սմ<sup>3</sup>, միներալացված հատվածներում 2.68 գ/սմ<sup>3</sup> / 2.62-2.75 գ/սմ<sup>3</sup>, բնական խոնավությունը խիճ - խիճավազային գրունտներում 7.1 %, կավավազներում 19.6 %, պլաստիկությունը ավազակավերում 7.1 – 16.6 %, կավերում 17.1-25.9%, կավերի կաչողականությունը 0.45 – 0.5 կգ /սմ<sup>2</sup>:

Մայրական հենքի ապարները ժայռային են և կայուն են ստորգետնյա փորվածքների անցման համար , միայն տեկտոնական իջվածքների գոտում են ջարդրտված ու փշրված:

Մայր ապարների ճեղքավորվածությունն ու հողմնահարման աստիճանը տարբեր է: Ճեղքային դատարկությունների գործակիցը տատանվում է 1.16 – 30.64%, այսինքն ըստ ճեղքավորվածության ապարների դասակարգումը տատանվում է մեծ ընդգրկությամբ / դիապազոնում/ շատ թույլից մինչև շատ ուժեղ:

Կամրջակ գետի ավազանում դիտվում են սելավային երևույթներ, հատակային և կողային հողմնահարում, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ շահագործման ժամանակ:

### *3.5. Շեղելություններ հանքավայրի պաշարների վերաբերյալ*

Մարջանի հանքավայրի հաշվեկշռում ընդունված է C<sub>1</sub>+C<sub>2</sub> կարգի 4707.8 հազ. տոննա հանքաքար, ընդ որում C<sub>1</sub> կարգի 593.2 հազ. տոննա և C<sub>2</sub> կարգի 4114.6 հազ. տոննա: Ոսկու պաշարները 11997.6 կգ է, արծաթը 435.2 տոննա : Սույն նախագիտով նախագծվում 3.4 տարում փորձնական ռեժիմով արդյունահանել 1,2,6,6ա,7 հանքային մարմինների վերին շարտերից 168540 տ հանքաքար համապատասխանաբար 616.0 կգ ոսկի, 10.9 տոննա արծաթ:

Աղյուսակ 2.5.1

հանքային մարմին	հանքային մարմնի հզորությունը,մ	հանքաքարի պաշարները,տ	միջին պարունակությունը գ/տ		մետաղի քանակը	
			Au	Ag	Au , գ/տ	Ag, տ
1	1.71	57780	3.33	68.80	192.4	4.0
2	1.05	12685	2.27	50.23	28.8	0.6
6	2.02	56785	4.77	61.28	270.9	3.5
6ա	1.0	21200	3.13	10.96	66.4	2.3
7	0.8	20090	2.86	26.04	57.5	0.5
Ընդամենը միջինը	1.61	168540	3.65	61.04	616.0	10.9

Պաշարների վերին հորիզոններում կատարվում է պայմանական ոսկու որոշում, որը հավասար է 14.8:Մինիմալ արդյունաբերական պարունակությունը 2.1 գ/տ է: Ինչպես երևում է աղյուսակ #1 –ից փորձնական հանույթի հանքաքարի մեջ ոսկու պարունակությունը գերազանցում է մինիմալ արդյունաբերական պարունակությունից բոլոր հանքային մարմիններում:

### 2.6 Տեխնոլոգիական հետազոտությունների ցուցանիշները

Հանքավայրից վերցված են մեծածավալ 7 նմուշ 175 – 406 կգ քաշով 1971 թվականից մինչև 1990 թ-ը: Վերջին, VIII նմուշ վերցված է 2008 թ-ին: Նմուշների հետազոտությունները կատարվել են “Հայգումետոնախազիծ” ինստիտուտում: Տվյալները ամփոփված են հետևյալ աղյուսակներում

Հանքաքարի քիմիական կազմը

Աղյուսակ 2.6.1

Պարունակությունը, %									
Cu	Fe	S	Pb	Zn	As	Bi	Se	Te	Sb
0.015	4.20	0.49	0.061	0.074	0.02	հայտնաբերված չէ	հայտնաբերված չէ	հայտնաբերված չէ	0.019

Հանքաքարի սիլիկատայի կազմը

Աղյուսակ 2.6.2

Պարունակությունը, %							
SiO <sub>2</sub>	Al <sub>2</sub> O <sub>3</sub>	CaO	MgO	TiO <sub>2</sub>	P <sub>2</sub> O <sub>5</sub>	Fe <sub>2</sub> O <sub>3</sub>	ոռո + H <sub>2</sub> O
64.70	18.70	2.10	1.50	0.50	0.32	6.00	5.22

Ոսկու ֆազային անալիզի արդյունքները

Աղյուսակ 2.6.3

	Պարունակությունը, %	բաշխում, %
Ազատ	1.11	39.50
Սերտաճած	1.0	35.59
Ընդամենը հեշտ ցիանացվող	2.11	75.09
Ժանգոտ	0.10	3.56

Սուլֆիդների հետ կապված	0.31	11.03
Կապված ապարի հետ	0.29	10.32
Ընդամենը հետազոտման ենթարկված նմուշում	2.81	100

Փորձարարական գրավիտացիոն ֆաբրիկան նախատեսված է կառուցել Մարջանի հանքավայրի արդյունաբերական հարթակի վրա, նախատեսվում է տեղադրել հայտնի հանքային մարմիններից 2 – 2.5 կմ հեռավորության վրա: Հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնոլոգիական սխեման իրենից ներկայացնում է պարզ հոսքագիծ, կազմված այտավոր ջարդիչից, սնուցող զետեղարանից / բունկեր / , երկու գնդիկավոր աղացից, զտիչներից, պոմպերից, տեղաբաշխման և խտանյութային սեղաններից:

Ստորև բերվում է խտանյութային սեղանի վրա հանքաքարի հարստացման սխեման:

Հանքաքարի տեխնոլոգիական ուսումնասիրությունների ժամանակ ոսկու պարունակությունը հանքաքարում կազմել է 3.1 – 3.7 գ/տ, արծաթինը 60 – 63 գ/տ: Հանքաքարի գրավիտացիոն հարստացման սխեմայով տեխնոլոգիական տվյալները կայանում են հետևյալում՝ ոսկու կորզումը խտանյութում 48.70 % , արծաթինը՝ 27.4 %: Այս ցուցանիշները պահանջում են ճշտումներ, բարելավելով դրանց կորզումը և հասցնել 70% և 35% համապատասխանաբար:

Փորձարարական գրավիտացիոն ֆաբրիկայի հիմնական տեխնոլոգիական սարքավորումները

#### Աղյուսակ 2.6.4

Անվանումը	Նմուշ, տիպ	Քանակը
1. Այտային ջարդիչ	ՄԿԸ – 4 * 9	1

2. Սնուցող զետեղիչ		2
3. Ժապավենային փոխարկիչ		2
4. Գնդային աղաց	MLP 2100 * 2200	1
5. Ավազային պոմպ	-	2
6. Խտանյութային սեղաններ	CKO – 22	2
	CKO – 15	2
	CKO – 7.5	2
7. Լաբորատորային հնոց		1
8. Լաբորատոր սեղան		4
9. Հիդրոցիկլոն	ԴԼ - 50	1



### 3. Լեռնային և լեռնատեխնիկական մասեր

#### 3.1 Լեռնային աշխատանքների կազմակերպումը

Սույն նախագծով Մարջանի ոսկու հանքավայրի 1,2,6,6ա և 7 հանքային մարմինների վերին շերտերի մշակումը նախատեսվում է կատարել բաց եղանակով, նշված հանքային մարմինների մոտ 20 մ խորությամբ, խրամուղիների թորվածքներով:

#### 3.2 Բաց լեռնային աշխատանքներ

Բաց լեռնային աշխատանքների սահմանները որոշված են մակաբացման սահմանային գործակցի միջոցով հետևյալ բանաձևով`

$$K_{սահմ} = \frac{C_{ստ} - C_{բաց}}{C_{մակ}}$$

Որտեղ  $C_{ստ}$  – 1 տ հանքաքարի արդյունահանման ինքնարժեքը ստորգետնյա եղանակով – 34.8 դոլ / Մարջանի նախագիծ/;

$C_{բաց}$  – նույնը բաց եղանակով – 3.06 դոլ

$C_{մակ}$  –  $1մ^3$  մակաբացման ապարների հեռացման ծախսերը 2.10

$$K_{սահ} = \frac{34.8 - 3.06}{2.10} = 15.1 \text{ մ}^3/\text{տ}$$

### 3.3 Նախագծային կորուստները և աղքատացումը

Արդյունահանման աշխատանքներն ուղեկցվում են տեխնոլոգիապես անխուսափելի հանքաքարի կորուստներ և աղքատացում: Դրանք միմյանց հետ կապնված են արդյունահանման տեխնոլոգիայի առումով՝ մաքսիմալ, ու մինիմալ հարաբերությունով:

Տնտեսագիտական իմաստը արդյունահանման վամանակ, որ անհրավեշտ է վնասի նվազագույնը՝ կորուստների և աղքատացման տոկոսային հարաբերություններից: Ֆիզիկական իմաստով հիմնական բնօրոշիչ առանձնահատկություններ են՝ հանքային մարմինների մորֆոլոգիական ձևը, հզորությունը, անկման անկյունը, տարածման չափերը: Կանխատեսման կորուստների և աղքատացման նշանակությունների մեծությունները կարելի է որոշել ելնելով Մարջանի հանքային մարմինների, փոքր հզորություններից / 1 – 2մ / , մեծ փոփոխականությունից, կտրուկ անկման անկյուններից: Այս պարագաներում կորուստների և աղքատության մեծությունները ընդունվում են իրար հավասար և կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$Q/կ/ = Q/ա/ = 0.5H^2L \text{ ctg}\alpha$$

որտեղ  $Q/կ/$ ,  $Q/ա/$  - կորուստների և աղքատացումների նշանակություններն են,

$H$  - հանքաստիճանի բարձրությունը, մմ

